«Սպիտակ համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ՝ նախադպրոցական ուսումնական հաստատության լոգոպեդ- մանկավարժի՝ 1 դրույք թափուր պաշտոնի համար:

Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել ՀՀ ԿԳՄՍՆ 17.02.2022թ.-ի N 08-Ն հրամանով հաստատված նախադպրոցական ուսումնական հաստատության մանկավարժական աշխատողների ընտրության կարգի 3-րդ մասի 12-րդ կետով պահանջվող հետևյալ փաստաթղթերը.

1.դիմում(Ձև 1)

2.կրթության մասին փաստաթուղթ (դիպլոմ).

3.անձը հաստատող փաստաթուղթ.

4.աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք կամ աշխատանքային գրքույկ(առկայության դեպքում)

5.ինքնակենսագրություն (Ձև 4)

6.մեկ լուսանկար՝ 3x4 չափի.

7.այլ պետությունների քաղաքացիները ՝Հայաստանի Հանրապետությունում աշխատելու իրավունքը հաստատող փաստաթուղթը.

8.Հայաստանի Հանրապետության արական սեռի քաղաքացիները ներկայացնում են նաև զինվորական գրքույկ կամ զինվորական կցագրման վկայական.

9.հրատարակված հոդվածների ցանկը կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(դրանց առկայության դեպքում):

Մրցույթը անցկացվելու է՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ 17.02.2022 թվականի N 08-Ն հրամանի (փոփ. 17.09.2024 թվականի N 70-ն հրաման):

Մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերը՝ համաձայն ՀՀ ԿԳՄՍՆ 27. 03. 2024 թ. N 20-Ն հրամանի:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել անձամբ ՝ անձը հաստատող փաստաթղթով:

Փաստաթղթերը ընդունվում են 2026թ հուլիսի 15-ից մինչև օգոստոսի 11-ը ներառյալ,աշխատանքային օրերին՝ժամը՝ 9:00-ից մինչև 18:00-ն:

Լոգոպեդ-մանկավարժի մրցույթը տեղի կունենա 12.08.2026թ-ին՝ժամը 13:00-ին:

Հարցաշարին ծանոթանալու համար կարող եք անցնել հետևյալ հղումով՝ https://escs.am/am/news/11978

Տեղեկությունների համար զանգահարել՝099-14-54-70 կամ(0-255)2-44-48 հեռախոսահամարին:

«Սպիտակ համայնքի թիվ 1 մանկապարտեզ» ՀՈԱԿ

Հասցե՝ ք. Սպիտակ ՈՒզբեկական թղմ

էլ.փոստ՝ spitakn1mankapartez@mail.ru